

ՌԱԴԻՈՐԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԴԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ԴԱՄԱԿԱՐԳԻՆ  
ԱՆՑՄԱՆ ԴԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ԴՎՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովին՝

1) մեկամսյա ժամկետում մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի վերաբերյալ հանրային քննարկումների ժամանակացույց,

2) իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման միջոցառումների ծրագրի, ժամանակացույցի և պատասխանատու մարմինների ցանկի ձևավորման և ՀՀ կառավարություն ներկայացման, ինչպես նաև ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման ընթացիկ աշխատանքների համակարգումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՁԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՈԱԴԻՈՅԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

### I. Ներածություն

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում անալոգային հեռուստառադիո-հեռարձակման նպատակով գրեթե ամբողջությամբ օգտագործվում են հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթները: Հեռուստառադիոհեռարձակման ծառայությունների հետագա ընդլայնումը և որակի բարձրացումը կիրառվող անալոգային տեխնոլոգիաների պայմաններում անհնար է. ոլորտի զարգացումը պահանջում է նոր տեխնոլոգիաների կիրառում: Խնդիրն ընդհանրական և արդիական է բոլոր երկրների համար: Այն լուծելու նպատակով, միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվում է հեռուստառադիո-հեռարձակման անալոգային համակարգից թվայինին անցման գործընթաց: Հեռուստառադիոհեռարձակման թվայնացման հիմնական առավելություններից են հեռարձակվող ծրագրերի ձայնի և պատկերի բարձր որակը, բարձր խանգարումակայունությունը, ինտերակտիվությունը:

Թվային հեռարձակումը թույլ է տալիս առավել արդյունավետ օգտագործել հաճախականությունների տիրույթը. ավելացնել հեռարձակվող հեռուստառադիո-ծրագրերի քանակը, հեռուստառադիոհեռարձակմանը հարակցել տեղեկատվական բարձր տեխնոլոգիական այլ ծառայություններ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2007)3 երաշխավորությունը հավաստում է հեռարձակման հանրային ծառայությունների հատուկ դերը, միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի և տեղեկատվական բազմաբնույթ ծառայությունների կոնվերգենցման դինամիկ միջավայրում թվային հեռուստառադիոհեռարձակումն առավել գրավիչ է դառնում իր ընձեռած նոր տեղեկատվական հնարավորությունների, որակական հատկանիշների և հաճախականությունների տիրույթների օգտագործման արդյունավետացման շնորհիվ՝ նպաստելով տեղեկատվական շուկայի զարգացմանը և ազատ մրցակցությանը:

Հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը և դրա իրականացման միջոցառումները նպատակաուղղված են ապահովելու բազմաբովանդակ հեռուստառադիոհեռարձակման լայն հասանելիությունը և մատչելիությունը, հաճախականությունների տիրույթների արդյունավետ օգտագործումը, հեռուստառադիոհեռարձակման և տեղեկատվական ցանցերի համակցելիությունը, հեռարձակման պլատֆորմների օգտագործման համաձայնեց-

վածությունը և տեղեկատվության ոլորտում կիրառվող տեխնիկական միջոցների համատեղելիությունը:

## **II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Հաշվի առնելով հեռուստառադիոհեռարձակման ոլորտում առկա իրավիճակն ու արդի իրողությունները, ստեղծված հնարավորությունները և կանխատեսվող մարտահրավերները՝ հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի նպատակն է հեռուստառադիոհեռարձակման ոլորտում իրականացնել բարեփոխումներ, այդ գործընթացում հավասարակշռել և ապահովել ՀՀ քաղաքացիների, հայրենական արդյունաբերության, հեռահաղորդակցական օպերատորների, հեռուստառադիոծրագրեր արտադրողների, պետական կառույցների, այլ շահագրգիռ կազմակերպությունների և հաստատությունների, տեղեկատվական ծառայությունների վերջնական սպառողների շահերը, նշել զարգացման ուղեգծեր, տեղեկացնել և նախապատրաստել շահագրգիռ կողմերին՝ անցումն արդյունավետ իրագործելու համար:

Հայեցակարգը հիմնված է հեռարձակման ոլորտում հարաբերությունների կարգավորման հետևյալ սկզբունքների վրա.

1. հեռարձակող ՁԼՄ-ների ազատություն, արհեստավարժություն և անկախություն,
2. հեռարձակող ՁԼՄ-ների աշխատանքներին ապօրինի միջամտության կամ գրաքննության բացառում,
3. հանրային և մասնավոր հեռարձակողների հավասարակշռված համակեցություն,
4. հաճախականությունների բնական սահմանափակ ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործում, հաճախականությունների հատկացման արդար և թափանցիկ ընթացակարգերի ապահովում
5. հեռահաղորդակցական ենթակառուցվածքներին ազատ և հավասար հասանելիություն,
6. մրցակցության և բազմակարծության խթանում,
7. հեռարձակման միջազգային ստանդարտների և սկզբունքների կիրառում:

## **III. ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Թվայնացումը, որպես հեռարձակման զարգացման փուլ, անխուսափելի է: 1990-ականներից այդ միտումը, արբանյակային հեռարձակման ծառայություններից զատ, ընդգրկել է նաև ռադիոհեռուստատեսային վերգետնյա հեռարձակումը:

Տեսաձայնային նյութերի արտադրության, պահպանման և փոխանցման արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թվային ազդանշանի սեղմման ստանդարտների կատարելագործումը: MPEG-2 ստանդարտը օգտագործվում է եթերային հեռարձակման ժամանակ՝ ներառելով արբանյակային հեռարձակումը և մալուխային հեռուստատեսությունը: Այս ստանդարտը լայնորեն կիրառվում է մեր օրերում: MPEG-2 ստանդարտը ճկուն է տեղեկատվական փոփոխական հոսքի արդյունավետության առումով: Այն ապահովում է հեռուստատեսային թվային հեռարձակման գործող երկու հիմնական ստանդարտները. SDTV՝ թվային ստանդարտ հեռուստատեսություն (4-6 Մբ/վ հոսքի արագությամբ) և HDTV՝ բարձր ճշգրտության թվային հեռուստատեսություն (ավելի քան 20 Մբ/վ հոսքի արագությամբ):

1999 թ. ստեղծված MPEG-4 ստանդարտը ևս հնարավորություն է ընձեռում հեռուստապատկերը փոխանցել IP ցանցերով և հանդիսանում է առավել արդյունավետ սեղմման համակարգ: Այն լուրջ նախադրյալ է հեռուստառադիոհեռարձակման և համացանցային տեսալսողական նյութերի տարածման կոնվերգենցված միջավայրի ձևավորման համար: MPEG-4 ստանդարտը օգտագործվում է եթերային հեռարձակման և տեսահեռախոսակապի ժամանակ և իր մեջ ընդգրկում է MPEG-2 և նմանատիպ ստանդարտների բազմաթիվ ֆունկցիաները՝ ավելացնելով բարձր ճշգրտության ցուցադրման հնարավորությունները:

Ռադիո-հեռուստատեսային հեռարձակման թվայնացումը նպաստում է հաճախականության տիրույթի օգտագործման արդյունավետության բարձրացմանը. բազմապատկվում է հեռարձակվող ռադիոհեռուստատեսային ծրագրերի քանակը, հնարավոր է դառնում միահաճախականային ցանցերի շահագործումը:

DVB-T ստանդարտով վերգետնյա հաղորդիչ ցանցի կիրառումը թույլ է տալիս միաժամանակ իրականացնել տարբեր որակի հեռուստածրագրերի տարածում (HDTV՝ բարձր, SDTV՝ ստանդարտ, LDTV՝ ցածր ճշգրտության հեռուստատեսություն):

Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին բնորոշ են տվյալների փոխանցման արագության կարգավորելիությունը, որով պայմանավորվում է մեկ հեռուստաալիքով հեռարձակվող տարբեր հեռուստածրագրերի քանակը և տեսաձայնային որակը, անդրադարձած էլեկտրամագնիսական ալիքներից պաշտպանվածության չափի կարգավորելիությունը, մոդուլյացիոն սխեմաների այլընտրանքը, ապահովվածությունը տեղեկատվության փոխանակման սխալից և այլն:

Հեռարձակման թվային համակարգին անցումն ապահովում է նաև սպառողների տեղեկատվական հատուկ կարիքները՝ առաջարկելով լրացուցիչ ծառայություններ, ինչպես հեռուստահաղորդումների էլեկտրոնային տեղեկատուն (EPG), տելետեքստը, հաղորդումների լեզվի այլընտրանքային տարբերակները:

Ազդանշանի փոխանցման և հեռարձակման վերգետնյա ցանցերով հնարավոր է հեռարձակել DVB-T և DVB-H ստանդարտների հեռուստածրագրեր: DVB-T և DVB-H ծրագրերը կարող են ներառվել միևնույն մուլտիպլեքսում: Սակայն անհրաժեշտ է նշել, որ DVB-T և DVB-H ստանդարտների ազդանշանների տարածման ցանցերի կառուցվածքը տեխնիկական լուծումներով և ֆինանսական ներդրումներով տարբեր են:

Կաշկանդված չլինելով հեռուստատեսային գունային համակարգերի և ստանդարտների (PAL, SECAM, NTSC, ..., B, G, K, L, M, ...) միջև տրանսկոդավորման անհրաժեշտությամբ՝ թվային հեռարձակումն էականորեն հեշտացնում է հեռուստառադիոծրագրերի ներքին և միջազգային փոխանակման խնդիրը, ինչն այնքան կարևոր է գլոբալիզացիայի ժամանակաշրջանում:

#### **IV. ՀԵՌՈՒՏԱՌԱԴԻՈՅԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԱՆԱԼՈՎԱՅԻՆԻՑ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՈՒՄՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ**

Հեռուստառադիոհեռարձակման անալոգայինից թվային համակարգին անցման գործընթացը արտերկրում բնորոշվում է հետևյալ ընդհանրություններով.

##### **1. 1998-2002 թթ.**

- *ի հայտ են գալիս առաջին թվային հեռուստատեսությունները, որոնք ծառայություններ են մատուցում վճարովի հիմունքներով,*

- հետաձգվում կամ դադարեցվում է թվայնացման ազգային ծրագրերի իրագործումը,
- թվայնացման գործընթացն ընթանում է ցածր տեմպերով:

## **2. 2002-2005 թթ.**

- ի հայտ են գալիս առաջին անվճար թվային պլատֆորմները,
- թվայնացման գործընթացում ներգրավվում են հանրային հեռարձակողները,
- հեռուստառադիոհեռարձակման անալոգայինից թվային համակարգին անցման ծրագրերը և ժամկետները անորոշ են,
- ռադիոհեռուստատեսային թվային համակարգերը համամատարար արագ ընդլայնվում են:

## **3. 2005-2008 թթ.**

- ռադիոհեռուստատեսային թվային համակարգերի համատարած ներդրում արևմտաեվրոպական պետություններում,
- հեռուստառադիոծրագրերի հեռարձակման անալոգային և թվային համակարգերի միաժամանակյա շահագործում,
- հեռարձակման թվային տեխնոլոգիաների կատարելագործում:

## **4. 2008-2010 թթ.**

- HDTV-ի փորձնական գործարկում,
- ռադիոհեռուստատեսային թվային համակարգերի լայն ներդրում արևելաեվրոպական պետություններում,
- հեռուստատեսային անալոգային հեռարձակման դադարեցման ժամկետների հստակեցում,
- հեռուստատեսային անալոգային հեռարձակման դադարեցում մի շարք երկրներում,
- ռադիոհեռուստատեսային շուկայի որոշ մասնակիցների գործունեության խթանում և խրախուսում:

## **5. 2010-2015 թթ. (նախատեսված է)**

- վերջնական անցում թվային հեռարձակմանը երկրների մեծամասնությունում,
- HDTV հեռարձակման ընդլայնում,
- շարժական միջոցների համար թվային հեռուստատեսության և ինտերակտիվ ծառայությունների զարգացում:

Թվայնացման գործընթացում հայեցակարգային խնդիրներից է ռադիո-հեռուստատեսային ծառայությունների անվճար կամ վճարովի սկզբունքով մատուցման ընտրությունը: Արևմտաեվրոպական երկրներում գերակշռում է ռադիո-հեռուստատեսային ծրագրերի անվճար հեռարձակումը, որը զուգակցվում է վճարովի լրացուցիչ ծառայությունների մատուցմամբ: Փորձը ցույց է տալիս, որ ոլորտում արագ առաջընթացը կարող է իրականություն դառնալ անվճար հեռարձակման պարագայում՝ առանձին վճարովի բաղադրիչների հետագա ներմուծման հնարավորությամբ:

Առաջատար պետությունները տարբերվում են նաև թվայնացման գործընթացի կազմակերպման տարածքային մոտեցմամբ: Մի շարք երկրներ թվայնացումն իրականացրել են ըստ շրջանների՝ հերթականությամբ, մյուսները գերադասել են միաժամանակյա գործընթացը: Թվայնացման տարածքային մոտեցումը նվազեցնում է ռիսկերը և հնարավորություն ընձեռում գործընթացում ուղղումներ մտցնել՝ հենվելով սեփական փորձի վրա:

Առաջադեմ փորձի երկրները տարբեր մոտեցումներ են ցուցաբերել նաև թվայնացման գործընթացի ավարտի ժամկետների սահմանման հարցում: Այն պետությունները, որոնց քաղաքացիները առավելագույնս ապահովված են ռադիո-հեռուստատեսային արբանյակային և մալուխային ծառայություններով, սահմանել են թվայնացման գործընթացի ավարտի հստակ ժամկետներ, իսկ այն պետությունները, որտեղ ռադիոհեռուստատեսության ոլորտում գերակշռում է վերգետնյա հեռարձակման համակարգը, բավարարվել են գործընթացի ավարտի մոտավոր ժամկետների սահմանմամբ:

## **V. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՍԱՆ ՀԱՍՏԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակում են իրականացնում 81 հեռուստաընկերություն և 19 ռադիոընկերություն (տես Աղյուսակներ 1 և 2):

Երևան քաղաքի տարածքում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող 22 հեռուստաընկերությունները քաղաքի տարածքում ապահովում են 100 տոկոսանոց ծածկույթ: Մինչդեռ մարզերի տարածքներում հեռարձակվող միջինը 8-10 հեռուստածրագրերի ծածկույթը տվյալ մարզի ամբողջ տարածքում համասեռ չէ, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են՝ այդ մարզի տարածքում գործող տեղական հեռուստաընկերությունների հաղորդիչ սարքավորումների ցածր հզորությունը, Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանցի զարգացվածության և տեխնիկական ապահովվածության ցածր մակարդակը, տեղանքի աշխարհագրական առանձնահատկությունները և այլն: Այդ իսկ պատճառով, մարզային առանձին բնակավայրում հեռարձակվող հեռուստածրագրերի միջին թիվը ավելի փոքր է՝ 5-6 հեռուստածրագիր: Այլ է պատկերը Երևանին մերձակա բնակավայրերում: Այստեղ, բացի տեղական և հանրապետական սփռում իրականացնող ընկերությունների հեռուստածրագրերից, մասամբ ընդունվում են նաև Երևանյան մի քանի հեռուստածրագրեր: Հեռուստաալիքներից միայն մեկն է ապահովում ՀՀ բնակավայրերի 100 տոկոսանոց ընդգրկվածություն:

Հայաստանի տարածքում մալուխային հեռարձակում են իրականացնում 30 հեռուստաընկերություն: Նրանց բաշխվածությունը Երևանում և մարզերում հետևյալն է. 8-ը գործում են Երևանում, 3-ը՝ Գեղարքունիքում, 2-ը՝ Արարատում, 1-ը՝ Արագածոտնում, 1-ը՝ Արմավիրում, 5-ը՝ Կոտայքում, 5-ը՝ Սյունիքում, 2-ը՝ Շիրակում, 2-

ը՝ Վանաձորում, 1-ը՝ Տաուշում: Մալուխային հեռուստաընկերությունների բաժանորդների թիվը կազմում է Հայաստանի բնակչության մոտավորապես 7.5 տոկոսը:

Արբանյակային կապի միջոցով հեռուստաձևաչափերի ընդունման ցուցանիշն ըստ բնակավայրերի տարբեր է: Արբանյակային ընդունիչների թիվը կախված է այնպիսի հանգամանքներից, ինչպիսիք են բնակչության սոցիալական անապահովությունը և տվյալ տարածքում հեռարձակվող հեռուստաձևաչափերի պակասը: Մոտավոր տվյալներով այսօր Հայաստանի տարածքում հեռուստաձևաչափերի արբանյակային ընդունում իրականացնում է բնակչության մոտավորապես 5 տոկոսը: Հայաստանի տարածքում գործող հեռուստաընկերություններից միայն երեքն են իրականացնում արբանյակային հեռարձակում:

ՀՀ տարածքում հեռարձակվող բոլոր ռադիոընկերությունները գործում են բացառապես FM տիրույթում, բացառությամբ Հայաստանի հանրային ռադիոյի, որը գործում է երկար, կարճ և միջին ալիքների տիրույթներում: Ռադիոձևաչափերի ծածկույթը Երևանում և մարզերում հետևյալն է. 16 ռադիոընկերություն հեռարձակում են իրականացնում Երևանում (որից 3-ը՝ Երևանում և միաժամանակ մի քանի մարզերում), 3-ը՝ մարզերում: Յուրաքանչյուր բնակավայրում միջինը հեռարձակվում է 3-4 ռադիոձևաչափ:

Նկատի ունենալով ՀՀ լեռնային ռելիեֆը՝ հեռուստակապուղիների 1-ին տիրույթում DRM+ ռադիոհեռարձակման թվային համակարգի օգտագործումը կապահովի լավագույն ծածկույթ և կհանդիսանա FM-ի (հեռուստակապուղիների 2-րդ տիրույթ) փոխարինման արդյունավետ տարբերակ: Հետևաբար, ռադիոհեռարձակման թվայնացման գործընթացը կարող է սկսվել հեռուստահեռարձակման թվայնացման գործընթացից հետո, երբ տեղի կունենա հեռուստակապուղիների 1-ին տիրույթի ազատումը հեռուստաէթերից:

Հայաստանի հեռուստաձևաչափերի հեռարձակման ցանցում հեռուստաձևաչափերի ազդանշանների հեռարձակումն իրականացվում է առավելապես ռադիոռելեային գծերով (ՌՌԳ): Հիմնական հաղորդակցության ուղիներից կտրված (մեկուսացված) հեռավոր բնակավայրերում հանրային հեռուստաընկերության հեռուստաձևաչափերն ընդունվում են արբանյակից: Առանձին դեպքերում հեռուստաձևաչափերի ընդունումն իրականացվում է եթերով՝ հեռուստատեսային վերահաղորդիչներով:

ՀՀ տարածքում առկա է 55 ռադիոռելեային և 48 տեխնիկական վերահաղորդիչ կայան: ՀՀ մնացած բոլոր բնակավայրերում տեղադրված են արբանյակային ընդունմամբ կայաններ, այսպիսով ապահովվելով առնվազն մեկ հեռուստակայանի համընդհանուր ընդունումը:

ՀՀ հարավում ռադիոմոդեմային կայանների միջև հաղորդումը կատարվում է թվային եղանակով: Միաժամանակ, շուրջ 80 կայաններ ապահովում են հիմնական ճանապարհներին զուգահեռ FM տիրույթով ռադիոհեռարձակումը: Թվով 30 հեռուստատեսային կայաններ մասնավոր են:

Հանրային հեռուստաընկերության կողմից անցկացված սոցիալական հարցման տվյալների համաձայն, 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ, արտերկրի արտադրության հեռուստացույցներ ունի Երևանի բնակչության 100%-ը, իսկ Հայաստանի մնացած տարածքի բնակչության 81.1%-ը:

Ժնևի RRC 2006 (GE06) վերգետնյա թվային ռադիոհեռարձակման պլանի եզրափակիչ ակտի համաձայն՝ թվային հեռարձակման համար նշանակվել են 3-րդ, 4-րդ և 5-րդ ռադիոհաճախականային տիրույթների կապուղիները:

Հայաստանում առկա է հաճախականությունների տիրույթի էքստենսիվ կիրառում, մասնավորապես հեռուստակապուղիների 1-ին տիրույթում, որը դեռևս օգտագործվում է հեռուստահեռարձակման նպատակներով և ըստ էության կհանդիսանա թվայնացման ընթացքում անալոգային ալիքների հիմնական պահուստը:

Հաճախականային հեռուստակապուղիների 3-րդ տիրույթում ևս կիրառվում է բացառապես հեռուստահեռարձակման նպատակներով: Եվրոպայի մեծ մասում այն կիրառվում է Eureka 147 ստանդարտների DVB-T և թվային ռադիոյի ծառայությունների հեռարձակման համար:

Հայաստանի լեռնային լանդշաֆտը հաճախականությունների վերակիրառման մեծ հնարավորություններ է ընձեռում:

## VI. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ելնելով վերը շարադրվածից, հեռուստառադիոհեռարձակման անալոգայինից թվային համակարգին անցումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. ռադիոկապի տարածաշրջանային կոնֆերանսի RRC 2006 վերգետնյա թվային ռադիոհեռարձակման GE 06 պլանի եզրափակիչ ակտերը ՀՀ կառավարության կողմից վավերացնելու անհրաժեշտություն, որից հետո GE 06 թվային ռադիոհեռարձակման պլանը Հայաստանի Հանրապետության համար կստանա իրավական ուժ,

2. թվային հեռուստատեսության ազդանշանները եթեր հեռարձակող օպերատորներին պետք է տրվեն ՀՀ տարածքում թվային ռադիոհեռարձակման համար նախատեսված 241 նշանակված կապուղիներից համապատասխան բնակավայրերի հատկացումները (որոնցում կնշվի հաղորդչի տեղադրվելու աշխարհագրական կոորդինատները, հզորությունը, ալեհավաքի բարձրությունը և այլ անհրաժեշտ տվյալներ):

Այդ գործընթացի ապահովման համար անհրաժեշտ են համապատասխան նախագծային հաշվարկներ, որոնք կատարվելու են հատուկ հաշվարկային ծրագրային փաթեթի ձեռքբերումից հետո:

Նշված ծրագրով հաշվարկված հատկացումների գրանցումից հետո Հեռահաղորդակցության Միջազգային Միության (ՀՄՄ) տեղեկատվական միջազգային ռեգիստրում ՀՀ տարածքում թվային ռադիոհեռարձակման պլանը կդիտվի որպես ՀՄՄ-ի կողմից ընդունված ծրագիր Հայաստանի Հանրապետության համար:

3. առնվազն մեկ անվճար սոցիալական փաթեթ (հինգից վեց ալիք ներառող) և մի քանի վճարովի փաթեթներ ներառող երկու-երեք մուլտիպլեքսների օրինական գործունեության ապահովում անկախ կարգավորող մարմնի կողմից՝ ըստ օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների,

4. մինչև անալոգային հեռարձակման վերջնական դադարեցումը ՀՀ անապահով քաղաքացիների և խոցելի խմբերի համար թվային հեռարձակմամբ հեռուստառադիոծրագրերի ընդունման և ապակողավորման սարքավորումների ապահովում,

5. հիմնացանցի և հեռարձակման առավելագույն մարդկային ծածկույթի ապահովում,

6. հեռուստառադիոժրագրերի թվային հեռարձակման գործընթացում հոգևոր ժառանգության պահպանման, մշակութային բազմազանության և բազմակարծության ապահովում,

7. հեռուստառադիոժրագրերի թվային հեռարձակման և տարածման հանրային ծառայությունների սակագների կարգավորման ապահովում,

8. հեռարձակման ծառայություններ իրականացնող օպերատորների և հեռահաղորդակցական ցանցեր շահագործողների համար թվային հեռարձակման գործընթացում ներգրավվելու հավասար հնարավորությունների մշակում և ապահովում,

9. հեռուստառադիոժրագրերի թվային հեռարձակման առևտրային ծառայությունների խրախուսում և խթանում,

10. տեղեկատվական հասարակության տեխնիկական պահանջների ապահովմանն ուղղված միջոցների արտադրության և ներկրման խրախուսում և խթանում,

11. հաճախականային տիրույթի կառավարման արդյունավետ մեթոդների մշակում և կիրառում,

12. նոր թվային տեխնոլոգիաների կիրառման պարագայում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության ապահովում:

## **VII. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՐՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ**

### *1. Հասարակական կարծիքի հարցում և շուկայի հետազոտություն*

Թվային անցման առաջընթացի վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումներ, և անցման պրոցեսի համապատասխանեցում Եվրոպական Հանձնաժողովի i2010 ռազմավարական փաստաթղթին: ՀՀ-ում թվային հեռուստացույցների տարածվածության և հեռուստակապուղիների 1-ին տիրույթի օգտագործման վերաբերյալ շուկայական հետազոտությունների անցկացում:

### *2. Արժեք-օգուտ վերլուծություններ*

Անալոգայինից թվային հեռարձակման համակարգերին անցման ժամանակահատվածի օպտիմալությունը կախված է այդ անցման արժեք/օգուտ հաշվեկշիռից, հետևաբար անհրաժեշտ է անցկացնել շուկայի մանրամասն հետազոտություն՝ սպառողների տեսակետների և լրացուցիչ ծառայությունների համար վճարելու պատրաստականության վերաբերյալ:

### *3. Տեղեկատվական և աջակցող արշավներ*

Անցման գործընթացի ժամանակին իրագործումը և ավարտը կախված է ընդունիչ սարքավորումների ձեռքբերման և ծառայությունների գների վերաբերյալ վերջնական սպառողների ընկալման մակարդակից:

*4. Տիրույթի կառավարման նոր մոտեցումներ*

Նոր մոտեցումները կարող են ներառել շուկային կողմնորոշված մոտեցումներ.

1) լիցենզիաներ և գնային առաջարկներ՝ նույն ռեսուրսների օգտագործման համար տարբեր տիպի օպերատորների միաժամանակյա մասնակցություն,

2) տիրույթի օգտագործման իրավունքի առևտուր կամ վաճառք:

Թվային անցման արագացման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան լիցենզիայով ապահովել հանրային հեռուստա-ռադիոընկերությանը՝ պահպանելով հանրային հեռարձակումը թվային միջավայրում, և թվային հեռարձակման միջավայրում դոմինանտ ընկերությունների (կոնգլոմերատների)՝ թվային մուլտիպլեքսներ, հեռուստակայաններ, հեռուստահաղորդումների արտադրողներ և ծրագրային ապահովման մատակարարներ միավորող օպերատորների կազմավորումը:

Օրենքները և կանոնակարգումները պետք է կարգավորեն բաժնետերերի իրավունքները և պարտականությունները: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի սպառողների հետևյալ խմբերի պահանջներին.

- 1) խոցելի խմբեր,
- 2) հատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամ (անաշխատունակ) անձինք,
- 3) առողջապահության և կրթության ոլորտում ընդգրկված հաստատություններ,
- 4) մշակույթի և սպորտի ոլորտում ընդգրկված հաստատություններ:

*5. Թվային դիվիդենտի արդյունավետ օգտագործում*

Հաճախականության տիրույթի մի մասը, որն անհրաժեշտ է անալոգային հեռուստատեսության համակարգերով ծրագրերի հեռարձակման համար, էականորեն կկրճատվի թվային հեռարձակման ներդրումից հետո: Հաշվի առնելով վերոհիշյալը, հաճախականության տիրույթի մի մասը, որը մնում է թվային հեռարձակմանը վերջնական անցումից հետո, հանդիսանում է թվային դիվիդենտ:

Թվային դիվիդենտի արդյունավետ օգտագործման նախապայմաններից է շուկայի պահանջներին համապատասխան հեռարձակման ծառայությունների հեռանկարային զարգացման կանխատեսումը: Կարգավորման շրջանակը պետք է լինի բավականաչափ ճկուն, որպեսզի ներառի ծառայությունների իրականացման և զարգացման բազմազան հնարավորություններ:

*6. Միջազգային և միջսեկտորային համագործակցություն*

Թվային անցման և ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել ակտիվ միջսեկտորային և միջազգային համագործակցություն:

**VIII. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԲԻԶՆԵՍ**

Անցման պրոցեսում ընդգրկված շահագրգիռ կողմերի վրա տնտեսական ազդեցությունը կարող է ներկայացվել հետևյալ ձևով.

Շահագրգիռ կողմեր	Ներդրում	Դրական արդյունքներ
Բովանդակության մատակարարներ	-ազդանշանային հաղորդման նոր համակարգեր, -հաղորդման	-ազդանշանային հաղորդման ցածր արժեք, -կոմերցիոն հաղորդումներից և գովազդից բարձր

	արտադրության նոր մեթոդներ	եկամուտների ստացման հնարավորություն, -նոր եկամուտներ
Ցանցային օպերատորներ	-ազդանշանային հաղորդման նոր համակարգեր, -նոր անտենային համակարգեր, -մասնակի նոր միացման համակարգեր	-ամբողջական անցումից հետո էներգիայի պակաս սպառում, -տարածության և սարքավորման ռացիոնալացում, -էժան վերահսկում
Վերջնական սպառողներ	-ընդունման նոր սարքավորումներ, -մասնակի նոր ալեհավաքային համակարգեր	-քիչ սարքերի պահանջ, -էներգիայի քիչ սպառում
Սարքավորման արտադրողներ	-նոր տեխնոլոգիաների ներմուծում, -արտադրության նոր մոդելներ	-նոր աշխատատեղեր, -վաճառքի ընդլայնման հնարավորություններ, -արտադրության ռացիոնալացում և հումքի օգտագործում
Կառավարություն, ղեկավարություն	-տեղեկատվական արշավի ֆինանսավորում, -որոշ ծառայությունների և սարքավորման սուբսիդավորման փորձարկում	-մրցակցության և մամուլի բազմակարծության աճ, -թվային դիվիդենտ

Հայաստանի Հանրապետությունում թվային անցման հիմնական ծախսային ուղղություններն են.

- Գործող մայրուղային ռադիոռելեային գծերի թվայնացում կամ այլընտրանքային ուղիների առաջարկում՝ դեպի մարզեր հեռահաղորդում կազմակերպելու համար, հեռուստակայաններում պարտադիր համահասանելի փաթեթի ընդունման համար թվային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում,

- Հեռուստացույցերի թվային կցուրդների տրամադրում բնակչության առավել անապահով խավերին,

- Հեռուստակայաններում ծրագրերի առնվազն մեկ փաթեթի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ առնվազն մեկական DVB-T թվային հաղորդակի և լրակազմի ձեռքբերում, տեղադրում:

Թվային հեռուստատեսության ներկայումս ամենատարածված բիզնես-մոդելը անվճար եթերային հեռուստատեսությունն է: Դա առիթ է դարձել, որ արտադրողները թողարկեն առավել էժան թվային կցուրդներ, չնայած որ դրանք թույլ չեն տալիս

հեռուստադիտողին օգտվել բարձր տեխնոլոգիական ինտերակտիվ ծառայություններից:

Անցումը թվային հեռարձակման համակարգերին նվազեցնում է հեռարձակման ցանցերի գործառույթների արժեքը (գինը), բերում է թվային ընդունիչների մեծաքանակ վաճառքի, հեշտացնում է բովանդակության վերամշակումը և պահպանումը:

Թվային հեռարձակման համակարգերի մյուս կարևոր առավելությունը առաջանում է հաճախականային ռեսուրսային տիրույթի մի մասի ազատումից, ինչը հնարավորություն է տալիս ներդնել այլ ծառայություններ՝ ինչպես բջջային կապը և վերգետնյա հեռարձակումը, այնպես էլ միջազգային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները:

Իրավական տեսանկյունից թվային ազդանշանների թողարկմանը և հաղորդմանը մասնակցում են բովանդակության արտադրողներն ու մատակարարները, մուլտիպլեքս օպերատորները և ցանցային օպերատորները:

### *1) Բովանդակության արտադրողներն ու մատակարարները*

Առաջարկվում է իրավական տեսանկյունից հստակորեն տարանջատել զուտ բովանդակության արտադրողներին մուլտիպլեքս ու ցանցային օպերատորներից, այսպիսով տարբերակելով ծրագրերի ստեղծումը դրանց սերվիսային համալրումից և հաղորդումից:

### *2) Մուլտիպլեքս օպերատորները*

Մուլտիպլեքս օպերատորը մատակարարում է մուլտիպլեքս ծառայություններ, որոնք բացի հեռուստա- և ռադիո- հաղորդումներից՝ ենթադրում են նաև այլ թվային ծառայություններ, էլեկտրոնային հաղորդակցման ծառայություններ և այլ ուղեկցող ազդանշաններ, որոնց մատակարարումը կարող է կարգավորվել առանձին լիցենզիաներով:

### *3) Ցանցային օպերատորները*

Ցանցային օպերատորը մուլտիպլեքս ազդանշանը վերջնական սպառողին է հասցնում հաղորդող ցանցի միջոցով, որը հատուկ տեխնիկական գործողությունների արդյունքում թվային ազդանշանը ճառագայթում է եթեր:

Անցման փուլում հեռուստատեսության վիճակի բարելավման կարևոր աղբյուր է արտասահմանյան ներդրողների հոսքը Հայաստանի Հանրապետություն:

Անցման գործընթացը և եվրոպական երկրների ընդունած վերջնաժամկետները կնպաստեն թվային հեռուստատեսային շուկայի զարգացմանը: Դա հնարավորություն կտա բաժնետերերին անցման փուլում մրցակցել այլ գլոբալ հետաքրքրվող խմբերի հետ, ինչը կունենա դրական տնտեսական ազդեցություն, կբերի ներմուծման և արտահանման աճի, բովանդակության որակի և ընդգրկման տիրույթի թե՛ մրցակցության:

Անցման գործընթացը կարող է ունենալ հետևյալ խոչընդոտները.

- քաղաքական դաշտում եական որոշումների պակաս, ինչպիսին է անալոգայինից թվային հեռարձակման համակարգերին վերջնական անցման վերջնաժամկետի սահմանումը,

- տնտեսական/շուկայական ոլորտում. 1) անալոգային ընդունիչների հիմնավոր հենքի կարիք, 2) սպառողների փոքր պահանջարկը կապված անցման խթանիչների պակասի հետ, 3) դժկամություն՝ կապված օպերատորների ներդրումներին ուղեկցող ֆինանսական ռիսկերի հետ:

Սոցիալապես անապահով ընտանիքների վրա թվային հեռարձակմանն անցման ազդեցությունը մեղմելու նպատակով ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման հանրապետական համակարգում հաշվառված շուրջ 150 հազար ընտանիքները կսուբսիդավորվեն թվային կցուրդներ (շուրջ 1.5-2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով) ձեռք բերելու նպատակով:

Չնայած թվային անցումը լրացուցիչ ծախսեր է ենթադրում գործընթացի բոլոր շահառուների կողմից, նրանց բոլորի, ինչպես նաև վերջնական օգտվողների համար երկարաժամկետ կտրվածքով դրական արդյունքն ակնհայտ է: Միաժամանակ, նկատի ունենալով թվային անցման ֆինանսական ներդրումների վերադարձման անհրաժեշտությունը, նախատեսվում է ի համեմատ անալոգայինի՝ երկարացնել տրամադրվելիք թվային հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները:

## **IX. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- Թվային հեռարձակմանն անցման գործընթացում սկզբնական փուլում նախապատվությունը տալ ռադիոհեռուստատեսային ծառայությունների անվճար սկզբունքով մատուցմանը՝ առանձին վճարովի բաղադրիչների աստիճանական ներմուծման հնարավորությամբ:

- Թվայնացման գործընթացն իրականացնել ըստ հաճախականությունների բաշխման գոտիների կամ շրջանների՝ նվազեցնելով ռիսկերը և հնարավորություն ընձեռելով հետագա փուլ-առ-փուլ ճշգրտումների համար:

- Սուբսիդավորել ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման հանրապետական համակարգում հաշվառված ընտանիքներին՝ թվային կցուրդներ ձեռք բերելու նպատակով: Բնակչությանը մատչելի և որակյալ կցուրդների ապահովման նպատակով սոցիալական կցուրդների համար հայտարարել պետական բաց տենդեր:

- Մինչև 2010 թ. հուլիսի 20-ն ապահովել հեռուստառադիոծրագրերի թվային հեռարձակման ներդրման և անալոգայինից թվային հեռարձակման համակարգին անցման համապատասխան իրավական կարգավորման դաշտի ձևավորումը:

- Մինչ թվային հեռուստատեսության անցումը կատարել հաշվարկներ, ստեղծել հատկացված հաճախականությունների պլանը և գրանցել ՀՄՄ-ի տեղեկատվական միջազգային ռեգիստրում:

- Հաշվի առնելով ՀՀ-ում հեռուստառադիոծրագրերի տարածման համար ցանցերի և ենթակառուցվածքների առանձնահատկությունը՝ մինչև 2010 թ. հուլիսի 20-ը ընդունել էլեկտրակապի ստանդարտացման եվրոպական ինստիտուտի հեռուստառադիոծրագրերի վերգետնյա թվային հեռարձակման, արբանյակային թվային հեռարձակման, մալուխային թվային հեռարձակման և շարժական թվային հեռուստատեսության ստանդարտներին համապատասխանող ազգային ստանդարտներ:

- Ընդունել միասնական տեխնիկական ստանդարտներ հեռուստառադիո-հեռարձակմանը հարակցող տեղեկատվական այլ ծառայությունների համար:

- Մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ապահովել հեռարձակվող անալոգային բոլոր հեռուստառադիոհաճախների թվային ձևաչափով կրկնօրինակումը:

- Մինչև անալոգային հեռարձակման վերջնական դադարեցումը ապահովել ՀՀ ամբողջ տարածքում հեռուստառադիոհաճախների (առնվազն՝ սոցիալական մոլտիպլեքսի) թվային հեռարձակման ծածկույթը:

- Ապահովել անցումը երեքը մեկում սկզբունքով (triple play)՝ ռադիո-, հեռուստա- և հեռախոսային կապի և էլ. ծառայությունների հասանելիությունը հասարակությանը:

- Առանձնակի ուշադրություն հատկացնել դժվարամատչելի բնակավայրերում կապի և հեռարձակման հաստատմանը:

- Պետական-մասնավոր համագործակցության ներդրման շրջանակներում բաց տեղերների հայտարարումը ընդունել որպես ցանցային օպերատորի և բովանդակության հեռարձակողների ընտրության լավագույն տարբերակ:

- Թվային բովանդակության ստեղծման, ինչպես նաև հեռարձակման համար սահմանել լիցենզավորման սկզբունքները: Թվային հեռարձակման լիցենզիաների համար հաստատել գործողության ժամկետների այնպիսի տևողություն, որը կապահովի ներդրումների վերադարձը:

- Թվայնացման նախնական ներդրումային ծախսերը մեծ են և վերադարձ են ապահովում միայն որոշ ժամանակ անց, հետևաբար անհրաժեշտ է ապահովել որոշակի չափով պետական միջոցների ներգրավում կամ որոշ դեպքերում՝ պետական բաժնեմասերի մասնակի կամ ամբողջական մասնավորեցում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԵՌՈՒՄՍԱԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ԵՎ ԵԹԵՐԱՄԱԼՈՒԽԱՅԻՆ («ԷԿ-ԱՓ» ՓԲԸ) ՍՓՈՌՏԱԸ

<b>1. Երևան</b>	
1	«ԱՐ հեռուստաընկերություն» ՍՊԸ
2	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
3	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
4	«Ա.Լ.Մ.-ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
5	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
6	«ՀԱՅՐԵՆԻՔ-ԹԻՎԻ» ՍՊԸ
7	«Կուլտուրա» հեռուստածրագիր
8	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
9	«ԴԱՐ-21» հեռուստաընկերություն» ՓԲԸ
10	«ԱրմենԱկոր - ԹիՎի» ՍՊԸ
11	«ՇՈՂԱԿԱԹ» հեռուստաընկերություն ՍՊԸ
12	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
13	«Թի Վի Ֆայֆ» ՓԲԸ
14	«Շանթ» ՍՊԸ
15	«ՇԱՐԿ» ՍՊԸ
16	«Արարատ» հեռուստածրագիր
17	«Երևան» հեռուստաընկերություն ՓԲԸ
18	«Հուսաբեր» ՓԲԸ
19	«Է.Վ.» հեռուստաընկերություն» ՍՊԸ
20	«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղ
21	«ՍԻՆԵՄԱՔՍ» ՍՊԸ
22	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ
23	Ռուսական առաջին հեռուստածրագիր
<b>2. Արագածոտնի մարզ</b>	
1	«Կուլտուրա» հեռուստածրագիր
2	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
3	«Արարատ» հեռուստածրագիր
4	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
5	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
6	Ռուսական առաջին հեռուստածրագիր
7	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
8	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
<b>3. Արարատի մարզ</b>	
1	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
2	«Արարատ» հեռուստածրագիր

3	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ
4	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
5	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստաօրագիր
6	Ռուսական առաջին հեռուստաօրագիր
7	«Ա.Լ.Ս. –ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
8	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
<b>4. Վայոց Ձորի մարզ</b>	
1	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստաօրագիր
2	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
3	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
4	Ռուսական առաջին հեռուստաօրագիր
5	«Արարատ» հեռուստաօրագիր
6	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
7	«Ձորի Կանչ» ՍՊԸ
8	«Ա.Լ.Ս. –ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
<b>5. Գեղարք ունիքի մարզ</b>	
1	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
2	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստաօրագիր
3	Ռուսական առաջին հեռուստաօրագիր
4	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
5	«Գ.Ա.Լ. և ընկերներ» ՍՊԸ
6	«Ա.Լ.Ս. –ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
7	«Արարատ» հեռուստաօրագիր
8	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
9	«ՔՅԱՎԱՌ» Հեռուստաընկերություն» ՍՊԸ
10	«ՌԱԴԻՈ» ԱԿ
<b>6. Լոռու մարզ</b>	
1	«Լոռի թի-Վի» ՍՊԸ
2	Ռուսական առաջին հեռուստաօրագիր
3	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
4	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
5	ՌՏՌ-Պլանետա» հեռուստաօրագիր
6	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ
7	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
8	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ
9	«Ա.Լ.Ս. –ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
10	«Արարատ» հեռուստաօրագիր
11	«Ֆորտունա» ՍՊԸ
12	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ
13	«Անկյուն գումարած 3» ՍՊԸ
<b>7. Կոտայքի մարզ</b>	

1	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
2	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
3	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
4	«Սիրակ» ՍՊԸ
5	«Ա.Լ.Մ.– ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
6	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
7	«Արարատ» հեռուստածրագիր
8	Ռուսական առաջին հեռուստածրագիր
9	«ԱՐՈՎՅԱՆ» հեռուստախմբագրություն» ՍՊԸ
10	«Նարեկ հեռուստաընկերություն» ՍՊԸ
11	«ԼՈՒՍԱԼԻՔ հեռուստաընկերություն» ՍՊԸ

**8. Տավուշի մարզ**

1	Ռուսական առաջին հեռուստածրագիր
2	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
3	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
4	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
5	«Քամուտ» ՍՊԸ
6	«Արարատ» հեռուստածրագիր
7	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
8	«Իջևան ստուդիա» ՍՊԸ
9	«Ա.Լ.Մ. – ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

**9. Արմավիրի մարզ**

1	«ԱԼՏ» հեռուստախմբագրություն» ՍՊԸ
2	«ԹեՎ» ՍՊԸ
3	«Արարատ» հեռուստածրագիր
4	«ԷՋՄԻԱԾԻՆ» հեռուստաընկերության խմբագրություն» ԱԿ
5	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
6	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ

**10. Շիրակի մարզ**

1	«Շանթ» ՍՊԸ
2	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
3	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
4	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
5	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
6	Ռուսական առաջին հեռուստածրագիր
7	«Ա.Լ.Մ. – ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
8	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
9	«Ցայգ» ՍՊԸ
10	«Արարատ» հեռուստածրագիր
11	«ԶԱՊ» ՍՊԸ

**11. Սյունիքի մարզ**

1	«ՌՏՌ-Պլանետա» հեռուստածրագիր
2	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
3	Ռուսական առաջին հեռուստածրագիր
4	«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊԸ
5	«Ա.Լ.Մ. – ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
6	«Արմենիա Թի-Վի» ՓԲԸ
7	«Որոտանյան դոկանջներ» ՍՊԸ
8	«Արարատ» հեռուստածրագիր
9	«Լաստի Խուտ» ՍՊԸ
10	«Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ

## Աղյուսակ 2

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՍԱՐՁԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՈԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՍՓՈՒՄԸ

<b>1. Երևան</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ԱՎՏՈՌՈՎԴԻՈ» ՍՊԸ
3	«ՈւԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
4	«ՌԱԴԻՈ ՊՈՈ» ՍՊԸ
5	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ
6	«ՎԷՄ ՍՓՅՈՒՌ» ՍՊԸ
7	«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ
8	«ՖՄ –102.4» Ֆրանսիական ծրագիր
9	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ
10	«ԱՐԶԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ
11	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
12	«ՌԱԴԻՈ-ԱԼՖԱ» ՍՊԸ
13	«ՖՄ –105.5» ՍՊԸ
14	«ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն» ՓԲԸ
15	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ
16	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ
<b>2. Արագածոտնի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
<b>3. Արարատի մարզ</b>	
1	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
2	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
3	«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ

<b>4. Վայոց Ձորի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
3	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
<b>5. Գեղարքունիքի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
3	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
<b>6. Լոռու մարզ</b>	
1	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ
2	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
4	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
<b>7. Կոտայքի մարզ</b>	
1	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
2	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
<b>8. Տավուշի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
3	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
<b>9. Արմավիրի մարզ</b>	
1	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
<b>10. Շիրակի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
3	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
4	«ՇԱՆԹ» ՍՊԸ
5	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
<b>11. Սյունիքի մարզ</b>	
1	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
2	«ԱՐ Ռադիո Միջնայրցամաքային» ՍՊԸ
3	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ
4	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ

Համաձայն «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2009 թ. մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրության հավելվածի 58.9.4 կետի՝ նախատեսված է ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման հայեցակարգային սկզբունքների մշակում և իրականացում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. հունիսի 24-ի N 878-Ն որոշման 4.3.11.3.6.1 կետով ևս կարևորվում է ՀՀ տարածքում ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի հեռարձակման արդիականացման, թվային տեխնոլոգիաների փուլային ներդրման հարցը, որի լուծման ուղղությամբ նախանշվում է ՀՀ տարածքում ռադիոհեռուստատեսության բնագավառում թվային համակարգի ներդրման ծրագրի ստեղծումը:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում հեռուստառադիոհեռարձակման ծառայությունների հետագա ընդլանումը և որակի բարձրացումը կիրառվող անալոգային տեխնոլոգիաների պայմաններում հնարավոր չէ և ոլորտի զարգացումը պահանջում է նոր տեխնոլոգիաների կիրառում, «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը նպատակաուղղվում է ապահովել բազմաբովանդակ հեռուստառադիո-հեռարձակման լայն հասանելիությունը և մատչելիությունը, հաճախականությունների տիրույթների արդյունավետ օգտագործումը, հեռուստառադիոհեռարձակման և տեղեկատվական բարձր տեխնոլոգիական այլ ծառայությունների համակցելիությունը, հեռարձակման պլատֆորմների օգտագործման համաձայնեցվածությունը և տեղեկատվության ոլորտում կիրառվող տեխնիկական միջոցների համատեղելիությունը, ինչը միաժամանակ կնպաստի տեղեկատվական շուկայի զարգացմանը և ազատ մրցակցության ապահովմանը: «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության

կառավարության արձանագրային որոշման նախագիծը մշակվել է՝ ելնելով հետևյալ իրավական ակտերից.

1. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

2. «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2009 թ. մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրություն:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. հունիսի 24-ի N 878-Ն որոշում:

## ՏԵՂԵԿԱԼՔ

«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱԼՔ

«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունն չի առաջանում: